ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 489-Ա

«ԱԿՎԵԼԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆ ՆՈՐԻԿԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 16-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Ակվելինա Ղազարյան Նորիկի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 16-րդ փողոց, թիվ 1 հասցեում գործող 62 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ և 3-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):

2.«Ակվելինա Ղազարյան Նորիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145104064 հաշվի համարին վճարել 28000 (երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 07
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 490-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԴԱՐԵՐ ԹԱՂԱՄԱՍ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, 3-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՀԱՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ ընդհանուր հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը և Օհան Սերյոժայի Խաչատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Դարեր թաղամաս, 7-րդ փողոց, 3-րդ փակուղի, թիվ 2 հասցեում գտնվող Օհան Սերյոժայի Խաչատրյանին (ծնված՝ 20.02.1970 թվականին) հատկացված 05-066-0213-0091 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 0,18007 հա տնամերձ հողատարածքի և ընդհանուր հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,04612 հա հողամասի նկատմամբ ճանաչել Օհան Սերյոժայի Խաչատրյանի

սեփականության իրավունքը (ընդհանուր հողամասի հատկացումը 0,40 հա, գրանցված ունի 0.26605 հա հողամաս, փաստացի օգտագործում է 0,18007 հա տնամերձ հողամաս):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Դարեր թաղամաս, 7-րդ փողոց, 3-րդ փակուղի, թիվ 2 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 07
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 491-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՄՎԵԼ ՍՈՒՐԻԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի դրույթներով, նկատի ունենալով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Սամվել Սուրիկի Մելքոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 7-րդ փողոց, թիվ 15 հասցեում գտնվող շինությունների նկատմամբ Սամվել Սուրիկի Մելքոնյանի՝ (ծնված՝ 06.12.1987 թվականին) շինությունների սպասարկման համար անհրաժեշտ 05-034-0142-0020 կադաստրային ծածկագրով 0,10890 հա մակերեսով փաստացի օգտագործվող տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 25.30 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1950 թվականին), 97.70 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1950 թվականին), 1.70 քմ մակերեսով նկուղի բաց պատշգամբի կամ աստիճանավանդակի (կառուցված՝ 1950 թվականին), 32.60 քմ մակերեսով անասնաշենքի (կառուցված՝ 1950 թվականին) և 9.4 քմ մակերեսով ծածկի (կառուցված՝ 1950 թվականին) սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,11 հա):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքերին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Զոլաքար բնակավայր, 7-րդ փողոց, թիվ 15 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 07
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 492-Ա

«ԽՐՃԻԹ-ԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Խրճիթ-Լիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Կամոյի փողոց, թիվ 100 հասցեում գործող 200 քմ մակերեսով հանդիսությունների սրահում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Խրճիթ-Լիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 16000 (տասնվեց հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 07

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի N 493-Ա

«ԽՐՃԻԹ-ԼԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 100 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՌԵՍՏՈՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. «Խրճիթ-Լիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, թիվ 100 հասցեում գործող 50 քմ մակերեսով ռեստորանային համալիրում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Խրճիթ-Լիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 5500 (հինգ հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 07

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ապրիլի 2025 թվականի №494-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-3), ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-13) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի №13-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-3), սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-13) թափուր պաշտոնները զբաղեցնելու համար 2025 թվականի մայիսի 8-ին, ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ:
2. Հաստատել մրցույթի հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 7
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 495-Ա

«ՌՈՒԲԻԿ ՀՈՒՆԱՆՅԱՆ ՆՈՐԻԿԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 65 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Ռուբիկ Հունանյան Նորիկի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայր, Արցախյան Ազատամարտիկների փողոց, թիվ 65 հասցեում գործող 34 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2.«Ռուբիկ Հունանյան Նորիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 08
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 496-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԳԵՏԱՓՆՅԱ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ 2-ՐԴ ՀԱՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԲԵՐՏ ԽՈՐԵՆԻ ԵՂՈՅԱՆԻ, ՆԵԿՏԱՐ ՍՈԼՈՄՈՆԻ ԶԻՐՈՅԱՆԻ, ԼԻԼԻԹ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻ, ՇԱՔԵ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻ ԵՎ ԻՆԳԱ ԱԼԲԵՐՏԻ ԵՂՈՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի դրույթներով, նկատի ունենալով, որ շինությունը կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունը կառուցված չէ կամ չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Ինգա Ալբերտի Եղոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Գետափնյա 1-ին փողոց, թիվ 25 հասցեի բնակելի տան 2-րդ հարկի նկատմամբ Ալբերտ Խորենի Եղոյանի՝ (ծնված՝ 21.10.1944 թվականին), Նեկտար Սոլոմոնի Զիրոյանի՝ (ծնված՝ 21.11.1954 թվականին), Լիլիթ Ալբերտի Եղոյանի՝ (ծնված՝ 20.10.1976 թվականին), Կարեն Ալբերտի Եղոյանի՝ (ծնված՝ 20.07.1979 թվականին), Շաքե Ալբերտի Եղոյանի՝ (ծնված՝ 04.06.1988 թվականին) և Ինգա Ալբերտի Եղոյանի՝ (ծնված՝ 30.07.1980 թվականին) շինության սպասարկման համար անհրաժեշտ 05-003-0505-0049 կադաստրային ծածկագրով 0,1197 հա մակերեսով փաստացի օգտագործվող տնամերձ հողամասի և դրա վրա

օրինական կառուցված 129,99 քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի (կառուցված՝ 1983 թվականին) սեփականության իրավունքը:

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
3. Անշարժ գույքին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Գետափնյա 1-ին փողոց, թիվ 25 հասցեն:
4. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 8
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 497-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 23/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-060-0121-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ձորագյուղ բնակավայրի 10-րդ փողոց, թիվ 23/7 հասցեում գտնվող 05-060-0121-0003 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝
   0,42025 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 10-րդ փողոց, թիվ 23/7 հասցեն,
   0,28 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 10-րդ փողոց, թիվ 23/8 հասցեն,
   0,2 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 10-րդ փողոց, թիվ 23/9 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ.ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 8
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 498-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-066-0098-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԱՆՋԱՏՎԱԾ 0.0467 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0098-0023 կադաստրային ծածկագրով գույքից անջատված 0,0467 հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 2-րդ փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 5/2 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 08
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 499-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-066-0098-0023 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԱՆՋԱՏՎԱԾ 0.0205 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 29-րդ կետի 3-րդ ենթակետը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0098-0023 կադաստրային ծածկագրով գույքից անջատված 0,0205 հա մակերեսով հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 2-րդ փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 5/1 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 08
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 500-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԾՈՎԻՆԱՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆԵՐ ԳԱՐԻԿ ԵՎ ԼԻԼԻԹ ԱՐՄԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆՆԵՐԻՆ, ԳԱՌՆԻԿ ԵՎ ՌՈՒԲԻՆԱ ՎԱՆԻԿԻ ՄԵԼՔՈՆՅԱՆՆԵՐԻՆ, ՀԱՄԼԵՏ ԵՎ ՀԱԿՈԲ ԱՐՄԵՆԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆՆԵՐԻՆ, ԻՆԳԱ ԵՎ ԻՐԻՆԱ ԱՐՄԵՆԻ ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 187-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ներկայացրած փաստաթղթերը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Ծովինարի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սաներ Գարիկ և Լիլիթ Արմենի Ղարիբյաններին, Գառնիկ և Ռուբինա Վանիկի Մելքոնյաններին, Համլետ և Հակոբ Արմենակի Հովհաննիսյաններին, Ինգա և Իրինա Արմենի Զաքարյաններին 50%-ով ազատել 2025 թվականի ծնողական վարձավճարից՝ հաշվի առնելով, որ նույն ընտանիքից մանկապարտեզ են հաճախում երկու երեխաներ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 08
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2025 թվականի N 501-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 46 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-027-0104-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղհովիտ բնակավայր, 7-րդ փողոց, թիվ 46 հասցեում գտնվող 05-027-0104-0006 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝

0,4429 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 7-րդ փողոց, թիվ 27/5 հասցեն,

0,1800 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Գեղհովիտ բնակավայր, 7-րդ փողոց, թիվ 27/4 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 08
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ապրիլի 2025 թվականի N 502-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 11 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՐԳԻՍ ԱՎԵՏԻՔԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԵՎ ՎԱԼՅԱ ՆՈՒՐԻՆԲԵԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի պահանջով, նկատի ունենալով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Սարգիս և Վալյա Հակոբյանների դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի 8-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 11 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Սարգիս Ավետիքի Հակոբյանի (ծնված՝ 06.05.1991 թվականին) և Վալյա Նուրինբեկի Հակոբյանի (ծնված՝ 01.10.1971 թվականին) շինությունների և սպասարկման համար անհրաժեշտ 05-016-0067-0081 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,2753 հա մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 20.23 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1983

թվականին) և 128.97 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1983 թվականին) սեփականության իրավունքը (ընդհանուր հողամասի հատկացումը 1,2 հա, գրանցված ունի 1.0346 հա հողամաս հողամաս):

2. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր, 8-րդ փողոց, 1-ին փակուղի, թիվ 11 հասցեն:
3. Հատկացված ընդհանուր հողամասի չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,1099 հա բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
4. Սույն որոշումից ծագող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 9
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2025 թվականի N 503-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0502-0095 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՑ ԲԱԺԱՆՎՈՂ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետը և 33-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, 1-ին փակուղի, թիվ 9 հասցեում գտնվող 05-003-0502-0095 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող գույքերին տրամադրել հետևյալ հասցեները՝

0,01185 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց, 1-ին փակուղի, թիվ 9 հասցեն,

0,00608 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Կամոյի փողոց, 1-ին փակուղի, թիվ 9/1 հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 10
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2025 թվականի N 504-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, Հ. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՉԻԿ ՍՈՒՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՎ ԱԼՄԱՍՏ ԳՐՈՒԶԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 29-րդ կետի պահանջով, նկատի ունենալով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Վաչիկ Սուրիկի Սարգսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Հ. Ներսիսյան փողոց, 2-րդ փակուղի, թիվ 2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Վաչիկ Սուրիկի Սարգսյանի (ծնված՝ 06.11.1976 թվականին) և Ալմաստ Գրուզի Սարգսյանի (ծնված՝ 13.11.1949 թվականին) շինությունների և սպասարկման համար անհրաժեշտ 05-003-0459-0064 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,1434 հա մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա

օրինական կառուցված 20.46 քմ մակերեսով նկուղի (կառուցված՝ 1971 թվականին), 116.10 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1971 թվականին), 23.70 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի (կառուցված՝ 1971 թվականին), 36.0 քմ մակերեսով անասնաշենքի (կառուցված՝ 1975 թվականին) և 50.21 քմ մակերեսով ավտոտնակի-հացատան (կառուցված՝ 1985 թվականին) սեփականության իրավունքը (ընդհանուր հողամասի հատկացումը 1,16 հա, գրանցված ունի 1,223 հա):

2. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաքի Հ. Ներսիսյան փողոց, 2-րդ փակուղի, թիվ 2 հասցեն:
3. Հատկացված ընդհանուր հողամասի չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,1434 հա բնակելի կառուցապատման հողամասը ճանաչել որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
4. Սույն որոշումից ծագող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 10
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ապրիլի 2025 թվականի N 505-Ա

«ՄԱՆՎԵԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՍԻ» ԱՁ-ԻՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 45-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 25 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 20.12.2024 թվականի N 187-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1.«Մանվել Գաբրիելյան Արամայիսի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, 45-րդ փողոց, թիվ 25 հասցեում գործող 38 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2025 թվականի 2-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2.«Մանվել Գաբրիելյան Արամայիսի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 10
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի N 506-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԴԱՐԵՐ ԹԱՂԱՄԱՍ, 7-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ ՄԻՆՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՀԵՐ ՄԿՐՏՉԻ ՃՌԻԿՅԱՆԻ, ԶԱՐԻԿ ՊԱՐԳԵՎԻ ՃՌԻԿՅԱՆԻ, ՌՈՒՍՏԱՄ ՄՀԵՐԻ ՃՌԻԿՅԱՆԻ ԵՎ ՌՈԼԱՆԴ ՄՀԵՐԻ ՃՌԻԿՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով, որ տնամերձ հողամասի հատկացված չափից ավել օգտագործվող հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 31-ի N-867 որոշմամբ հաստատված «Կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման կարգի» 5-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 48-րդ կետը Մհեր, Զարիկ, Ռուստամ և Ռոլանդ Ճռիկյանների դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Դարեր թաղամաս, 7-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 4 հասցեում գտնվող Մհեր Մկրտչի Ճռիկյանին (ծնված՝ 20.06.1959 թվականին), Զարիկ Պարգևի Ճռիկյանին (ծնված՝ 02.04.1965 թվականին), Ռուստամ Մհերի Ճռիկյանին (ծնված՝ 20.10.1987 թվականին) և Ռոլանդ Մհերի

Ճռիկյանին (ծնված՝ 06.02.1986 թվականին) հատկացված 05-066-0213-0086 կադաստրային ծածկագրով բնակելի կառուցապատման 0,0891 հա տնամերձ հողատարածքի և տնամերձ հողամասի հատկացման չափից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0,035065 հա հողամասի նկատմամբ ճանաչել Միեր Մկրտչի Ճռիկյանի, Զարիկ Պարգևի Ճռիկյանի, Ռուստամ Միերի Ճռիկյանի և Ռոլանդ Միերի Ճռիկյանի սեփականության իրավունքը (տնամերձ հողամասի հատկացումը 0,20 հա, գրանցված ունի 0.145965 հա տնամերձ հողամաս, իսկ 0.12205 հա տնամերձ հողամասը գրանցվել է 13.03.2025 թվականին դատարանի 15.05.2015 թվականի ԳԴ1/0308/02/15 վճռի հիման վրա):

2. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան: Հողամասին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Դարեր թաղամաս, 7-րդ փողոց, 2-րդ փակուղի, թիվ 4 հասցեն:
3. Սույն որոշումից բխող սեփականության իրավունքը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2025թ. ապրիլի 11
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի N 507-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՎԱՂԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԱՆ ՄԱՆԵ ԱՐԹՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ԾՆՈՂԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԶԵՂՉ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 187-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վաղաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ներկայացրած փաստաթղթերը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Վաղաշենի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան Մանե Արթուրի Ավետիսյանին 50%-ով ազատել 2025 թվականի ծնողական վարձավճարից, հաշվի առնելով, որ նա հանդիսանում է միակողմանի ծնողազուրկ երեխա:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 11
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի N 508-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-034-0332-0129 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,6004 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 561 հոդվածի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 197-Ա որոշումը և 2025 թվականի ապրիլի 11-ին կայացած աճուրդի արդյունքների մասին թիվ 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրում գտնվող 05-034-0332-0129 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության գործառնական նշանակության այլ հողատեսքի 0,6004 հա մակերեսով հողամասը վաճառել Սումբաթ Մակբեթի Ազիզյանին (ծնված՝ 09.05.1965 թվականին) որպես աճուրդում հաղթող ճանաչված և առավելագույն գին առաջարկած անձի:
2. Սումբաթ Մակբեթի Ազիզյանին՝ համայնքի բյուջեի 900145114105 հաշվի համարին վճարել հողամասի արժեքը 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սումբաթ Մակբեթի Ազիզյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ կատարելու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 11
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի N 509-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՓԱԿՈՒՂԻ, ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵԻ 05-003-0502-0120 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,0064 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 561 հոդվածի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 176-Ա որոշումը և 2025 թվականի ապրիլի 11-ին կայացած աճուրդի արդյունքների մասին թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, 1-ին փակուղի, թիվ 2/1 հասցեի 05-003-0502-0120 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,0064 հա մակերեսով հողամասը վաճառել Ավետիք Ալբերտի Ներկարյանին (ծնված՝ 13.04.1988 թվականին) որպես աճուրդում հաղթող ճանաչված և առավելագույն գին առաջարկած անձի:
2. Ավետիք Ալբերտի Ներկարյանին՝ համայնքի բյուջեի 900145101193 հաշվի համարին վճարել հողամասի արժեքը 330000 (երեք հարյուր երեսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Ավետիք Ալբերտի Ներկարյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ կատարելու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 11
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2025 թվականի N 510-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20 ՀԱՍՑԵԻ 05-045-0055-0005 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,1254 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 561 հոդվածի և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 198-Ա, 2025 թվականի հունվարի 30-ի թիվ 9-Ա որոշումները և 2025 թվականի ապրիլի 11-ին կայացած աճուրդի արդյունքների մասին թիվ 2 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծակքար բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 20 հասցեի 05-045-0055-0005 կադաստրային ծածկագրով համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,1254 հա մակերեսով հողամասը վաճառել Գնել Վազգենի Հակոբյանին (ծնված՝ 25.10.1981 թվականին) որպես աճուրդում հաղթող ճանաչված և առավելագույն գին առաջարկած անձի:
2. Գնել Վազգենի Հակոբյանին՝ համայնքի բյուջեի 900145106192 հաշվի համարին վճարել հողամասի արժեքը 1050000 (մեկ միլիոն հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Գնել Վազգենի Հակոբյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ կատարելու գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2025թ. ապրիլի 11
ք. Մարտունի